

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻԴՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսական ՄԱՐԱՆԴՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետ

Հայաստանի Հանրապետությունում եվրախնտեզրման գործընթացների պայմաններում առաջնային նշանակություն են ստանում հանրաքվեի ծագման, զարգացման տրամաբանության և միտումների, այլ երկրներում և մեր երկրում դրա կիրառման պատմական փորձի ուսումնասիրումը և արդյունավետության գնահատումը: Միաժամանակ, հանրաքվեի՝ պատմական համատեքստում ուսումնասիրությունը հնարավորություն կտա ի հայտ բերելու տարբեր երկրների սահմանադրաիրավական պրակտիկայում տեղ գտած թերություններն ու բացթողումները և դրանց վերհանմամբ խուսափելու մեր երկրում հանրաքվե կիրառելու դեպքում հնարավոր սխալներից: Այս ամենը կարող է էապես նպաստել ժողովրդավարական այդ ինստիտուտի օրենսդրական ճիշտ կարգավորման և իրականացման արդյունավետությանը, Հայաստանի Հանրապետությունում միջազգային առաջավոր փորձի ներդրմանը, պետական և հասարակական կյանքում հանրաքվեի ձևով ժողովրդի անմիջական կամաարտահայտության դերակատարության բարձրացմանը:

Հանրաքվեն՝ որպես հասարակական և պետական կյանքին բնակչության մասնակցության ձև, անցել է ձևավորման ու զարգացման պատմական երկարատև ուղի: Համաժողովրդական քվեարկության միջոցով հասարակական կյանքի կարևոր խնդիրների լուծումը մարդկությանը հայտնի է դեռևս հնագույն ժամանակներից՝ մարդկության պատմության նախապետական շրջանից: Հասարակական և պետական կյանքի կարևորագույն հարցերի լուծմանը ժողովրդին ներգրավելու հայեցակարգը շարունակել է գոյություն ունենալ և կիրառվել նաև պետականորեն կազմակերպված հասարակություններում: Չնայած հանրաքվեի ինստիտուտն ունի սեփական խորը պատմական արմատներ, այնուամենայնիվ գիտական շրջանակներում տիրապետող է այն տեսակետը, որ հանրաքվեի հայրենիքը Շվեյցարիան է¹, իսկ որպես առաջին հանրաքվեի ժամանակ է նշվում 1439 թվականը (Շվեյցարիա, Բեռնի կանտոն)²:

Պետք է նշել, որ, ըստ որոշ աղբյուրների, քաղաքական հարցերով կանտոնի ժողովի (Landesgemeinde) առաջին քվեարկությունը տեղի է ունեցել 1294 թվականին՝ Շվիցում³: Շվեյցարիայի մի շարք հողերում (Ուրի, Շվից, Օբվալդեն, Նիցվալդեն, Գերսաց, Գլարուս, Արտաքին Ռոդենի Անպենցել և Ներքին Ռոդենի Անպենցել) ժողովուրդն իրականացրել է գրեթե լիարժեք իրավաստեղծ գործունեություն: Այն սահմանափակված էր

¹ Տե՛ս Կոտոկ В. Ф., Референдум в системе социалистической демократии. М., 1964, էջ 22:

² Տե՛ս Сунцов Г. В., Конституционно-правовой институт референдума Российской Федерации и субъектов Российской Федерации, дисс. на соиск. уч. степени канд. юр. наук, Пенза, 2003, էջ 14:

³ Տե՛ս http://www.academia.edu/2181125/_XIII-XV_, էջ 23 (01.05.2013, 18:49):

միայն գերմանական կայսեր իշխանությամբ, որը ժամանակի ընթացքում դարձավ ձևական:

Հանրաքվեի ինստիտուտի զարգացման պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ այն պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝

1. հանրաքվեի ծագման և կայացման փուլ (15-րդ դարի կեսերից մինչև 19-րդ դարի կեսերը),

2. հանրաքվեի ինստիտուտի իրավական ամրագրում և լայն տարածում (19-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի սկիզբը),

3. հանրաքվեի՝ որպես ժողովրդաիշխանության ձևի հաստատում:

Հանրաքվեի ինստիտուտի զարգացումը այսպիսի փուլերի բաժանելը պայմանավորված է հանրաքվեի առարկայի, սուբյեկտների և կիրառման հաճախականության առանձնահատկություններով:

Ա. Խոսելով հանրաքվեի առարկայի զարգացման մասին՝ պետք է արձանագրել, որ այն պատմականորեն կրել է էական փոփոխություններ: Այսպես, եթե սկզբնական շրջանում ժողովրդաիշխանության այս ինստիտուտի օգնությամբ լուծվում էին ներպետական կամ համայնքային նշանակության խնդիրներ, ապա 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տեղի է ունենում հանրաքվեի առարկայի, այսինքն՝ հանրաքվեով լուծվող հարցերի շրջանակի ընդլայնում: Մասնավորապես, մի շարք կապիտալիստական պետությունների սահմանադրություններում ի հայտ են գալիս հոդվածներ, որոնք նախատեսում էին հանրաքվեի օգնությամբ ոչ միայն ներքաղաքական, այլ նաև արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերի լուծում: Այսպես, դեռևս 1912 թվականին Շվեյցարիայի Սահմանադրության մեջ (հոդված 89, կետ 3) ամրագրվեց դրույթ, համաձայն որի՝ անորոշ կամ 15 տարուց ավելի ժամկետ ունեցող միջազգային պայմանագրերի հաստատման համար պահանջվում էր անցկացնել համապետական հանրաքվե:

Հանրաքվեի ինստիտուտն առավել մեծ տարածում է գտնում հատկապես Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այն իր ամրագրումն ստացավ Առաջին աշխարհամարտից հետո ձևավորված մի շարք պետությունների՝ Ավստրիայի 1920 թ. (հոդ. 43-45, 60), Դանցիգ ինքնավար քաղաքի 1921 թ. (հոդ. 43, 45-49), Չեխոսլովակիայի 1920 թ. (հոդ. 46), Լատվիայի 1922 թ. (հոդ. 48, 50, 65, 72-80), Հունաստանի 1927 թ. (հոդ. 125), Լիտվայի 1928 թ. (հոդ. 103-104) սահմանադրություններում: Հանրաքվեն նախատեսված էր նաև գերմանական 8 հողերի (Բադեն, Բավարիա, Բրեմեն, Գեսսեն, Պրուսիա, Սաքսոնիա, Թյուրինգիա, Վյուրտեմբերգ) սահմանադրություններով⁴:

Սակայն պատմական գործընթացն ի հայտ բերեց հանրաքվեի ինստիտուտը ավանդական (ներկայացված ակտերը ընդունելու կամ մերժելու) նշանակությանը զուգահեռ այլ նպատակներով կիրառելու միտումներ: Որոշ երկրներում պետության գլուխը հասարակական կյանքի առանձին կարևոր խնդիրներ լուծելիս այս ինստիտուտի օգնությամբ շրջանցում էր ներկայացուցչական մարմինները: Այդպիսի գործընթացի հնարավորության մասին արևմտյան գիտնականները հայտնել էին դեռևս 1930 թվականին⁵: Հանրաքվեն վերածվում էր պետության գլխի և ներկայացուցչական մարմնի միջև հակասությունների վերացման միջոցի: Այն ձեռք էր բերում կառավարության և պառլամենտի, նախագահի և ժողովրդի ներկայացուցիչների միջև բախումների հաղթահարման ա-

⁴ St' u Maklaov B. B. Референдум в странах-членах Европейского Союза.-М., 1997, էջ 12:

⁵ St' u Carre de Marberg R. Consideration theorique sur la question de la combinaison du referendum avec le parlementarisme.-In: Annuaire de l'institut international de droit public.- Paris, 1931, էջեր 260-261:

ռանձնահատուկ մեթոդի բնույթ⁶: Հանրաքվեն ծառայում էր, որ ժողովուրդը հաշտարար լինի հանրային իշխանությունների միջև⁷: Խորհրդարանի հետ անհամաձայնության դեպքում օրինագիծը հանրաքվեի դնելու՝ պետության գլխի իրավունքն առաջին անգամ ամրագրվեց 1919 թվականի Վեյմարյան Սահմանադրության մեջ⁸: Սա մի կողմից կարող է սահմանադրական ձգնաժամի հաղթահարման միջոց ծառայել, սակայն նյուս կողմից այն կարող է խարխլել ժողովրդական ներկայացուցչության հիմքերը:

Հանրաքվեի ինստիտուտը միջազգային հանրության շրջանում ինչ-որ չափով հեղինակագրվեց այն բանից հետո, երբ երեք անգամ հանրաքվե անցկացվեց ֆաշիստական Պերմանիայում⁹: Համաժողովրդական քվեարկության էին դրվել Ազգերի Լիգայից Պերմանիայի դուրս գալու (1933թ.), նախագահի պաշտոնը ֆյուրերի և ռեյխսկանցլերի պաշտոնի հետ միավորելու (1934թ.), Ավստրիան Պերմանիային միավորելու (1938թ.) հարցերը¹⁰, որոնք նորություն էին հանրաքվեի առարկայի համատեքստում: 1933 թվականին հանրաքվեով ընդունվում է Պորտուգալիայի Սահմանադրությունը, որը մշակվել էր դիկտատոր Ա. Օ. Սալազարի կողմից: Հանրաքվեի ինստիտուտը իշխող քաղաքական վերնախավի շահերին ծառայեցնելու արատավոր պրակտիկա գրանցվեց Իսպանիայում՝ 1947 թվականին¹¹: Բոլոր այս դեպքերում հանրաքվեի արդյունքները չէին արտացոլում ժողովրդի իրական կամքը, քանի որ իշխող վարչակարգերն այդ արդյունքները համապատասխանեցրել էին սեփական նպատակային առաջնահերթություններին:

Սակայն պատմությանը հայտնի են նաև հանրաքվեն իսկական պետաիրավական առաքելությանը ծառայեցնելու դեպքեր: Օրինակ՝ 1939 թվականին Լյուքսեմբուրգում անցկացվեց հանրաքվե, որը մերժվեց պառլամենտի կողմից հավանության արժանացած՝ կոմունիստական կուսակցության գործունեությունը արգելելու մասին օրինագիծը¹², ինչը նույնպես հանրաքվեի առարկայի զարգացման արդյունք էր: Իր առաջադիմական բնույթով ուշագրավ էր նաև 1946 թվականի հունիսի 2-ին Իտալիայում անցկացված հանրաքվեն, որը հաղթանակ բերեց ձախ ուժերին¹³:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունում (այսուհետ՝ ԽՍՀՄ) հանրաքվեի մասին առաջին հիշատակումը կատարվել է ԽՍՀՄ 1936 թ. և միութենական հանրապետությունների 1937 թ. սահմանադրություններում: Մասնավորապես, ԽՍՀՄ 1977 թ. և Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (այսուհետ՝ ՀԽՍՀ) 1978 թ. սահմանադրություններն ամրագրում էին, որ «պետական կյանքի առավել կարևոր հարցերը դրվում են համընդհանուր քննարկման, ինչպես նաև՝

⁶ St' u Mirkin-Quetzovich B. Le referendum et le parlementarisme dans les nouvelles constitutions europeennes.-Paris, 1932, էջեր 288-289:

⁷ St' u Burdeau G. Traite de science politique.-Paris, 1952,-T.4, էջ 207:

⁸ St' u Современное буржуазное государственное право. Критические очерки. Основные институты. Т. 2 /Отв. ред. В. А. Туманов.-М., 1987, էջ 203:

⁹ St' u Трайнин И. П. Механизм немецко-фашистской диктатуры.-Ташкент, 1942, էջ 30: О непосредственном народном законодательстве в капиталистических странах.-Советское государство, 1937, N 1-2, էջ 102:

¹⁰ St' u Хессе К. Основы конституционного права ФРГ.-М., 1981, էջ 81:

¹¹ Առավել մանրամասն տե՛ս Samlon A. Theorie et pratique du referendum.//Notes et Etudes documentaires.-N 2736, 1960, 22 decembre, Paris, 1960, էջ 21:

¹² Առավել մանրամասն տե՛ս Fitting M.-E., Korff A. e.a. La democratie semi-directe dans le Vaud, 1938-1963.-In.: Etudes politiques vaudoises.-Lausanne, 1963, էջեր 20-21:

¹³ St' u Политический механизм диктатуры монополи.- М., 1974, էջ 32:

համաժողովրդական քվեարկության (հանրաքվե)»¹⁴: Սակայն որևէ իրավական ակտում չէր նշվում, թե որոնք էին այդ հարցերը: Նման վարքագիծը զուցե պայմանավորված էր նրանով, որ ԽՍՀՄ իշխանությունները չէին պատրաստվում օգտվել այդ ինստիտուտի ծառայությունից: Ուշագրավ է, որ դեռևս 1918 թ. հունվարի 11-ի «Թուրքահայաստանի մասին» Խորհրդային Ռուսաստանի ժողովնախորհի ընդունած դեկրետը նախատեսում էր ազատ հանրաքվեի անցկացում¹⁵:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հանրաքվեի ինստիտուտն իր ամրագրումն է ստանում Ֆրանսիայի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Իտալիայի, Ճապոնիայի հիմնական օրենքներում և Գերմանիայի Դաշնային Հանրապետության հողերի մեծ մասի սահմանադրություններում¹⁶: 20-րդ դարում այն ներառվում է Նոր Զելանդիայի և Օլենսիայի պետությունների սահմանադրություններ: Այս ինստիտուտը ընդունվեց նաև ասիական (Բանգլադեշ, Բիրմա, Հնդկաստան, Մալազիա, Նեպալ, Շրի Լանկա, Պակիստան, Սինգապուր, Ֆիլիպիններ և այլն), աֆրիկյան (Ալժիր, Անգոլա, Գաբոն, Գանա, Գվինեա, Եգիպտոս, Եթովպիա, Լիբիա, Կաբո-Վերդե, Կամերուն, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Մադագասկար, Ռուանդա, Սան Տոմե և Պրինսիպի, Սենեգալ, Տոգո և այլն) և Լատինական Ամերիկայի (Արգենտինա, Նիկարագուա, Պուերտո-Ռիկո, Պանամա և այլն) պետությունների կողմից և ամրագրվեց նրանց սահմանադրություններում:

Ինչպես ցույց է տալիս հանրաքվեի ինստիտուտի կիրառման համաշխարհային փորձը, դրա աշխարհագրության ընդլայնմանը զուգահեռ մեծանում էր նաև դրա կարգավորման առարկայի շրջանակը: 20-րդ դարի 80-ական թվականներին միջազգային մեծ արժագանք գտան Կանադայում՝ Քվեբեկի կարգավիճակի կապակցությամբ (1980 թ.)¹⁷, Շվեյցարիայում՝ Միավորված ազգերի կազմակերպությանը այդ երկրի անդամակցության վերաբերյալ (1985 թ.) և Իսպանիայում՝ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությանը այդ երկրի մասնակցության հարցով անցկացված (1986 թ.) հանրաքվեները¹⁸, որոնք ևս նորություն էին հանրաքվեի առարկայի համատեքստում:

Հետխորհրդային տարածքի երկրներում ևս անցկացվեցին հանրաքվեներ: Այսպես, 1991 թվականի փետրվարի 9-ին Լիտվայում, 1991 թվականի մարտի 31-ին Կրաստանում անցկացվեցին անկախության հանրաքվեներ: 1995 թվականի ապրիլի 29-ին և նույն թվականի օգոստոսի 30-ին Ղազախստանում անցկացվեցին հանրաքվեներ՝ Ղազախստանի Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը մինչև 2000 թվականի դեկտեմբերի 1-ը երկարաձգելու և Ղազախստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունելու հարցերով¹⁹: 2001 թվականի հունվարի 27-ին Ուզբեկստանում անցկացվեց հանրաքվե՝ երկալախոյա պառլամենտի ընտրության և նախագահի լիազորությունների սահմանադրական ժամկետը 5 տարուց 7 տարի դարձնելու հարցերով: ԽՍՀՄ-ում միակ համաժողովրդական քվեարկությունը (հանրաքվեն) ԽՍՀՄ-ի

¹⁴ Տե՛ս ԽՍՀՄ 1977 թ. և ՀԽՍՀ 1978 թ. սահմանադրությունների 5-րդ հոդվածները:

¹⁵ Տե՛ս Мамичев В. Н., Референдум в законодательстве зарубежных стран и России (историко-правовое исследование), дисс. на соиск. уч. степен. канд. юр. наук, Ставрополь, 2000, էջ 50:

¹⁶ Տե՛ս Маклаков В. В., նշվ. աշխ., էջ 13:

¹⁷ Տե՛ս Hogg P. (ed) Constitutional Law of Canada.-Toronto, 1985, էջ 101:

¹⁸ Տե՛ս Современное буржуазное государственное право. Критические очерки. Основные институты. Т. 2 /Омв. ред. В. А. Туманов.-М., 1987, էջեր 203-211:

¹⁹ Տե՛ս <http://www.bibliotekar.ru/konstitucionnoe-pravo-3/211.htm> (09.01.2013,18:12):

պահպանման վերաբերյալ 1991 թվականի մարտի 17-ին անցկացված հանրաքվեն էր: Սակայն Հայաստանի իշխանությունները հրաժարվեցին երկրում համամիութենական հանրաքվեի անցկացումից, և 1991 թվականի փետրվարին Հայաստանի Գերագույն խորհուրդը սկսեց Հայաստանի անկախության հանրաքվեի կազմակերպման աշխատանքները²⁰: Ռուսաստանի Դաշնությունում հանրաքվեներ են անցկացվել 1991 թվականի մարտի 17-ին, 1993 թվականի ապրիլի 25-ին, 1993 թվականի դեկտեմբերի 12-ին:

21-րդ դարի առաջին տասնամյակը ցույց տվեց, որ հանրաքվեի դերակատարությունը ոչ միայն չի նվազել, այլև աշխարհի շատ երկրներում այն շարունակում է մնալ որպես պետության և հասարակության կյանքի կարևորագույն հարցերի լուծման առաջնային միջոց: Այս ժամանակահատվածում անցկացված հանրաքվեներից ուշադրության են արժանի 2003 թվականի սեպտեմբերի 14-ին էստոնիայում Եվրոպական Միությանը այդ երկրի անդամակցության, 2004 թվականին Վենեսուելայում նախագահին վստահություն հայտնելու վերաբերյալ անցկացված հանրաքվեները²¹: 2006 թվականի սեպտեմբերի 17-ին Մերձդնեստրի Սուդովական Հանրապետությունում անցկացվեց անկախության վերաբերյալ երկրորդ հանրաքվե²²: 2011 թվականի հունվարի 9-ից 15-ը նմանատիպ հարցով հանրաքվե անցկացվեց Հարավային Սուդանում²³: 2012 թվականին հանրաքվեներ անցկացվեցին՝ Ռումինիայում՝ նախագահի վստահության²⁴, Պուերտո Ռիկոյում՝ այդ երկրի կարգավիճակի²⁵, Լատվիայում՝ ռուսերենը երկրորդ պետական լեզու ճանաչելու²⁶, Հյուսիսային Կոսովոյում՝ Կոսովոյի Հանրապետության իշխանության մարմինները ճանաչելու²⁷, Եգիպտոսում՝ Սահմանադրության ընդունման²⁸ և Լիխտենշտեյնում՝ Սահմանադրությունը բարեփոխելու²⁹, Լիտվայում՝ ատոմային էներգիայի օգտագործման³⁰ վերաբերյալ հարցերով:

Այսպիսով, հանրաքվեի առարկայի պատմական զարգացման տրամաբանությունը վկայում է հասարակության և պետության կյանքում անմիջական ժողովրդաիշխանության քննարկվող ձևի դերակատարության աճի մասին:

²⁰Տե՛ս http://www.ru.wikipedia.org/wiki/Всесоюзный_референдум_о_сохранении_СССР (01.05.2013, 19:18):

²¹Տե՛ս http://www.superinf.ru/view_helpstud.php?id=1745 (09.01.2013, 19:18):

²²Տե՛ս http://www.ru.wikipedia.org/wiki/Референдумы_в_Приднестровской_Молдавской_Республике (11.01.2013, 20:20):

²³Տե՛ս http://www.ru.wikipedia.org/wiki/Референдум_о_независимости_Южного_Судана (12.01.2013, 19:07):

²⁴Տե՛ս [http://www.ru.wikipedia.org/wiki/Референдум_в_Румынии_\(2012\)](http://www.ru.wikipedia.org/wiki/Референдум_в_Румынии_(2012)) (12.01.2013, 20:52):

²⁵Տե՛ս [http://www.ru.wikipedia.org/wiki/Референдум_о_статусе_Пуэрто_Рико_\(2012\)](http://www.ru.wikipedia.org/wiki/Референдум_о_статусе_Пуэрто_Рико_(2012)) (12.01.2013, 22:17):

²⁶Տե՛ս [http://www.ru.wikipedia.org/wiki/Референдум_в_Латвии_\(2012\)](http://www.ru.wikipedia.org/wiki/Референдум_в_Латвии_(2012)) (14.01.2013, 21:10):

²⁷Տե՛ս http://www.ru.wikipedia.org/wiki/Референдум_в_Северном_Косове (20.01.2013, 18:12):

²⁸Տե՛ս [http://www.ru.wikipedia.org/wiki/Египетский_конституционный_референдум_\(2012\)](http://www.ru.wikipedia.org/wiki/Египетский_конституционный_референдум_(2012)) (02.02.2013, 14:35):

²⁹Տե՛ս

[http://www.ru.wikipedia.org/wiki/Конституционный_референдум_в_Лихтенштейне_\(2012\)](http://www.ru.wikipedia.org/wiki/Конституционный_референдум_в_Лихтенштейне_(2012)) (10.02.2013, 21:42):

³⁰Տե՛ս [http://www.ru.wikipedia.org/wiki/Литовский_референдум_по_атомной_энергии_\(2012\)](http://www.ru.wikipedia.org/wiki/Литовский_референдум_по_атомной_энергии_(2012)) (15.02.2013, 15:08):

Բ. Ինչ վերաբերում է հանրաքվեի սուբյեկտներին, ապա այս կապակցությամբ արդեն նշել ենք, որ սկսած 13-14-րդ դարերից՝ Շվեյցարիայի մի շարք հողերում ժողովուրդն իրականացնում էր իրավաստեղծում: 1798 թվականին, երբ Շվեյցարիան նվաճվեց Ֆրանսիայի կողմից, ընդունվեց Շվեյցարիայի նոր Սահմանադրությունը: Սակայն դրանում պարունակվում էին իրավաստեղծմանը քաղաքացիների մասնակցության մի շարք սահմանափակումներ: Շվեյցարացի քաղաքագետ Սուտերն այդ սահմանափակումները հիմնավորում էր հետևյալ կերպ. «Օրինաստեղծ մարմնի գործունեությունը այն է, որ այն համապատասխան հարցը բազմակողմանի մշակի, քննարկի և լուծի: Ժողովուրդը հակված է յուրացնելու առանձին անձանց մտքերը, տարվելու դրանցով և հետևելու դրանց: Մինչդեռ օրենսդրության խնդիրը հանգում է այն բանին, որ այդ գաղափարները մշակվեն մանրամասնորեն և արտահայտվեն լավագույն ձևով: Ժողովուրդը, սակայն, չի կարող լուծել այդ խնդիրը»³¹:

Սակայն 1829 թվականին Շվեյցարիայում սկսվում է հեղափոխությունների, ժողովրդի իրավունքների «վերածննան» փուլը: 1831 թվականին Սենտ-Պալլեն կանտոնում ընդունվում է ժողովրդական վետոյի ինստիտուտը: Ամմիջական ժողովրդաիշխանության այս ինստիտուտն այնուհետև ճանաչում է ստանում Բազելում, Վալլիսում և Լյուցեռնում: 1845 թվականին Վադտ կանտոնը, բացի ժողովրդական վետոյից, ճանաչում է ոչ պարտադիր հանրաքվեն և ժողովրդական նախաձեռնությունը³²:

Ինչ վերաբերում է ամերիկյան մայրցամաքին, ապա, ըստ որոշ տվյալների, այստեղ հանրաքվեի ինստիտուտի առաջին կիրառումը տեղի է ունեցել 1640 թվականին³³: Սակայն որոշ նահանգներ միայն 1898 թվականին բնակչությանը օրենսդրորեն թույլատրեցին անմիջական մասնակցություն ունենալ իրավաստեղծմանը այնպիսի ձևերի օգտագործմամբ, ինչպիսիք են նախաձեռնությունը և հանրաքվեն³⁴: 19-րդ դարի վերջին ԱՄՆ-ի նահանգների մեծ մասում օրենսդրությունը նախատեսում էր սահմանադրությունների հաստատումը համաժողովրդական քվեարկության միջոցով³⁵: Սակայն այս պրակտիկան նահանգային դատարանները հաճախ կասեցնում էին՝ գտնելով, որ խորհրդարանը՝ որպես օրենսդիր իշխանության մարմին, չի կարող այս իշխանությունը փոխանցել ընտրողներին: ԱՄՆ-ի սահմանադրաիրավական պրակտիկայի առանձնահատկությունը այն է, որ այս երկրում համապետական մասշտաբով հանրաքվեներ և հարցումներ չեն կիրառվում: Այստեղ հանրաքվեները կիրառվում են նահանգային և տեղական մակարդակներում: Բացառություն է Դելավեր նահանգը, որտեղ սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ են մտնում հերթական երկու նստաշրջանների ընթացքում խորհրդարանի պալատներից յուրաքանչյուրի ձայների առնվազն 2/3-ով հավանության արժանանալու դեպքում³⁶:

Գ. Հանրաքվեի դերակատարության մասին կարող է վկայել նաև դրա կիրառման հաճախականությունը: Այսպես, 1848 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 1971 թվականի հունիսի 6-ը Շվեյցարիայում միայն դաշնային մակարդակով և միայն սահմանադրա-

³¹ Mounier. Archives parlementaires.-Paris, 1875, էջ 154:

³² Ст'у Мамичев В. Н., նշվ. աշխ., էջ 38:

³³ Ст'у Зиммерман Дж. Прямая демократия в Соединенных Штатах Америки: опыт и проблемы //Вестник МГУ. Сер. 11 «Право».-1991.-N 5, էջ 47:

³⁴ Ст'у Magruder's American Government.-Boston,-1980, էջ 631:

³⁵ Ст'у Тахтарев К. От представительства к народовластию: К изучению новейших стремлений политического развития современного общества.- СПб., 1907, էջեր 149-150:

³⁶ Ст'у Pious R. American Politics and Government. N. Y., 1986, էջ 136:

կան հարցերով ընտրողները մասնակցել են 157 քվեարկության³⁷: Շվեյցարացի պետականագետների և իրավագետների հաշվարկով 1848 թվականից սկսած դաշնային մակարդակով անցկացված հանրաքվեների թիվն ընդհանուր առմամբ հասնում է 240-ի³⁸:

Ժամանակակից աշխարհում նկատվում են հանրաքվեի ինստիտուտի առավել հաճախակի կիրառման միտումներ: 20-րդ դարի սկզբից մինչև 1986 թվականը Եվրոպայում անցկացվել է 365 համապետական հանրաքվե (Ավստրալիայում և Օլեանիայում՝ 41, Նոր Զելանդիայում՝ 9, Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրներում՝ 34 հանրաքվե): Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ասիական 16 պետություններում անցկացվել է 44 հանրաքվե, Աֆրիկայի պետություններում՝ 88³⁹: 1945-1968 թթ. ԱՄՆ-ում նահանգային մակարդակով անցկացվել է 497 հանրաքվե, որից 59-ը՝ պետիցիոն, 18-ը՝ օրենսդրական, պարտադիր, 336-ը՝ սահմանադրական, 84-ը՝ այլ հարցերով⁴⁰: Սակայն արևմուտքում հանրաքվեի դերակատարությունը միանշանակ չի ընդունվել: Ասվածի օրինակ կարող է ծառայել Մեծ Բրիտանիայի սահմանադրաիրավական պրակտիկան, որն աչքի չի ընկնում հանրաքվեի ինստիտուտի լայն կիրառությամբ: Ամբողջ պատմության ընթացքում այստեղ համապետական մակարդակով անցկացվել է ընդամենը 2 հանրաքվե՝ 1975⁴¹ և 2011⁴² թվականներին:

Հատկանշական է, որ 19-րդ դարում համապետական մակարդակով աշխարհում տարեկան անցկացվում էր 1-ից պակաս հանրաքվե (0,74): Բայց արդեն 20-րդ դարի առաջին տասնամյակում տարեկան անցկացվում էր 1,9 հանրաքվե, 50-ական թվականների կեսերին՝ 8,1 հանրաքվե, 80-ական թվականներին՝ 16,8 հանրաքվե⁴³:

Հայաստանի պետական շինարարության պատմությունը չունի հանրաքվեի կիրառման հարուստ փորձ: Թերևս նշանակալից էր Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի՝ 1991 թվականի մարտի 1-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին» որոշումը: Այդ պատմական ակտի միջոցով 1991 թվականի սեպտեմբերի 21-ին նշանակված հանրաքվեն ժողովրդին առաջադրել էր հետևյալ հարցը. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս»: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին կայացած հանրաքվեի արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 1991 թվականի սեպտեմբերի 23-ի հաղորդման մեջ նշվում է, որ հան-

³⁷ St' u Aubert J.-F. Traite de droit constitutionnel Suisse.-Neuchatel (Suisse). 1967/1982, vol. 1, էջ 161:

³⁸ St' u Butler L. and Ranney A. Referendums: A Comparative Study of Practice and Theory.-Washington, 1978, էջեր 14-46; Zeitschrift fur Schweizerisches Recht, 1972, N 5, էջեր 492-494:

³⁹ St' u Rourke J. T., Hiskes R .P., Zaraksadeh C. E. Direct Democracy and International Politics. Deciding International Issues Through Referendum.-L., 1993, էջեր 34-48: <http://www.c2d.unige.ch>.

⁴⁰ St' u Gazey R. J. Direct Democracy- A Study of the American Referendum.-Parliamentary Affairs.-1971.- N 2, էջեր 125, 137:

⁴¹ Առավել մանրամասն տե՛ս Wright T. The British Political Process: an Introduction.-London, 2000:

⁴² St' u <http://www.heraldsotland.com/politics/political-news/a-brief-history-of-referenda.1327201594> (20.03.2013, 11:42):

⁴³ St' u Rourke J. T., Hiskes R .P., Zaraksadeh C. E., նշվ. աշխ., էջ 3: <http://www.c2d.unige.ch>.

րաքվեի դրված հարցին կողմ են քվեարկել քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 94,39 տոկոսը⁴⁴:

Հանրաքվեի միջոցով ընդունվել են նաև Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 10-ի սահմանադրությունները: 2003 թվականի մայիսի 25-ի հանրաքվեով քվորումի բացակայության պատճառով մերժվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները⁴⁵:

Հայաստանի սահմանադրական բարեփոխումների գործընթացի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1458(2005) բանաձևում Վեհաժողովը կոչ էր անում «Հ իշխանություններին՝ սահմանադրական հանրաքվե անցկացնել 2005 թվականի նոյեմբերից ոչ ուշ⁴⁶: 2005 թվականի նոյեմբերի 27-ին կայացած հանրաքվեով բարեփոխվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Մեր երկրի պետաիրավական համակարգի պատմական զարգացումը շուրջ 70 տարի ընթացել է խորհրդային քաղաքականության հունով, ուստի հանրաքվեի զարգացման պատմությունը կարելի է քննարկել Ռուսաստանում հանրաքվեի զարգացման պատմության համատեքստում: Հեղինակները այն բաժանում են հետևյալ փուլերի՝

1. մինչհեղափոխական շրջանի ժողովրդական քվեարկություններ,
2. խորհրդային շրջան, որը պայմանականորեն կարելի է բաժանել 1917-1936 թթ. և 1936-1990 թթ.,
3. հետխորհրդային շրջան՝ 1990-1993 թթ.,
4. ժամանակակից շրջան՝ 1993 թվականի դեկտեմբերից մինչ օրս⁴⁷:

Բազմաթիվ սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառներով հանրաքվեն Հայաստանի Հանրապետությունում չի անցել զարգացման վերոնշյալ բոլոր փուլերը: Այս ամենը հիմք ընդունելով՝ կարծում ենք, որ նպատակահարմար է Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի զարգացման պատմությունը բաժանել երկու փուլի՝

1. հետխորհրդային: Այս փուլը, մեր դիտարկմամբ, սկսվել է անկախության մասին հանրաքվեով և ավարտվել 1995 թ. հուլիսի 5-ին Սահմանադրության ընդունմամբ: Սա խորհրդային պետաիրավական համակարգը նորով փոխարինելու և ազգային օրենսդրության հիմունքները ձևավորելու փուլն է:

2. ժամանակակից: Այս փուլն ընդգրկում է 1995 թվականից մինչ օրս ընկած ժամանակահատվածը: Սա հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդահիշխանության կարևորագույն ինստիտուտի դերակատարության աճի և հասարակության կողմից դրան շահանակության աստիճանական կարևորման փուլն է:

Այսպիսով, հանրաքվեի պատմական զարգացման գործընթացը բացահայտում է ժողովրդավարության ինստիտուտների զարգացմանը զուգահեռ հանրաքվեի առարկայի ընդլայնման միտումները և պետությունների սահմանադրաիրավական պրակտիկայում դրա ներգրավվածության աճը: Սակայն հանրաքվեի պատմական զարգացման վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում վկայում է, որ հասարակական և պետական կյանքի կարևորագույն հարցերը ժողովրդի կողմից անմիջականորեն լուծելու այս

⁴⁴ Տե՛ս Գ. Մ. Մինասյան, «Հանրաքվե»-Հայաստանի Հանրապետության 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեի նախապատրաստումը, անցկացումը և արդյունքներն ամփոփող փաստավավերագրական ժողովածու, Երևան, «Էրեբունի», 1992 թ., էջեր 114-115:

⁴⁵ Տե՛ս <http://www.ajk.am/Article.php?id=369&lang=arm> (17.02.2013, 22:17):

⁴⁶ Տե՛ս http://www.coe.am/en/docs/pace/resolution_1458.pdf (18.02.2013, 15:19):

⁴⁷ Տե՛ս http://www.superinf.ru/view_helpstud.php?id=1745 (22.02.2013, 19:10):

մեխանիզմը մեր երկրում դեռևս չի օգտագործվում իր հնարավորությունների ամբողջ ծավալով: Այդ իմաստով Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական գործընթացների աշխուժացման ակնկալիքով նպատակահարմար է համաժողովրդական քվեարկության ներկայացնել (բացի Սահմանադրության ընդունումից և դրանում փոփոխություններ կատարելուց) երկրի համար առավել կարևորություն ներկայացնող հարցերը, այդ թվում՝ առանձին օրենսդրական ակտերի նախագծերը, ինչը ՀՀ Սահմանադրության 112-րդ հոդվածի ուղղակի պահանջն է: Այն, մեր կարծիքով, մեծ չափով կնպաստի ժողովուրդ-իշխանություն հարաբերությունների բարելավմանը, իշխանությունների նկատմամբ ժողովրդի վստահության բարձրացմանը:

THE MAIN DIRECTIONS OF DEVELOPMENT OF THE REFERENDUM INSTITUTE

Ruslan MARANDYAN

*Graduate of RA Police Educational Complex
Head of research work department
of RA Police Educational Complex*

The research article is devoted to the origin and development process of referendum, and also to the study of its historical experience application in different parts of the world as well as in the Republic of Armenia. In particular, the historical development of referendum institute is considered in the context of referendum subject, object and application frequency. The study of the referendum, according to the mentioned directions, gives an opportunity to reveal the logic of discussed institute role growth of direct democracy in the world constitutional and legal practice. The article also referred to the gaps of referendum application in the practice of many countries, which will give us an opportunity to avoid such mistakes in the Republic of Armenia. At the same time an attempt was made to expose the short history of referendum in Armenia to stage separation based on the state scientific approaches of Soviet Union and Russia.